# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԱՄՄԲ-ԳՀԱՊՁԲ-25/20 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**Մեծամոր համայնք** **05 հունվարի 2026թ.**

2025թ. դեկտեմբերի 10-ից 2026թ հունվարի 05-ը, ՀՀ, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, ք. Մեծամոր, Վարչական կենտրոն թիվ 1 շենք հասցեում գտնվող՝ «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի գրասենյակում, տեղի ունեցավ վառելիքի ձեռքբերման ԱՄՄԲ-ԳՀԱՊՁԲ-25/20 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Վ. Հակոբյան | «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրենի օգնական, |
| Հ. Պետրոսյան | «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի ճարտարագետ, |
| Կ. Մնոյան | «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի պահեստապետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վ. Հակոբյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Վ. Էլոյանը՝ «ՓՐՈՄՈՒՌՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին Հավելվածով Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1.Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:

2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:

3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և իրավերի պայմաններին՝ դրանց համապատասխանության մասին:

4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

5. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

6. Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ի նախագծ/եր/ը հաստատելու և անգործության ժամկետի մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. դեկտեմբերի 10-ին, ՀՀ, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, ք. Մեծամոր, Վարչական կենտրոն թիվ 1 շենք հասցեում գտնվող «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի գրասենյակում ժամը 12:00-ին Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ Ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2) ենթակետով սահմանված պահանջների համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված նախահաշվային արժեքը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1-ին | Դիզելային վառելիք, ամառային | 49,000,000.00 |
| 2-րդ | Բենզին ռեգուլյար | 7,500,000.00 |

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց տեղեկատվություն գրանցամատյանում կատարված նշումների մասին և Հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ՀՎՀՀ | գործունեության հասցե | Հեռախոս | էլ. հասցե |
| 1 | «ԱՍ ՕՅԻԼ» ՍՊԸ | 03577901 | ՀՀ Կոտայքի մարզ, Քասախ Ա. Մարտիրոսյան փ. 5շ. 17բն | +374 95416171 | asoilllc1@gmail.com |
| 2 | «Վ. Վ. ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ | 04447245 | Արմավիր, Երևանյան 1/12 | +374 98100001 | vv.comp@mail.ru |
| 3 | «Մաքս Օիլ» ՍՊԸ | 02662703 | ք. Երևան, Էրեբունի 12/4 | +374 94526751 | maxoil.llc@mail.ru |

Հանձնաժողովը գնահատեց հայտ պարունակող ծրար/ներ/ը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակից/ներ/ի կողմից ներկայացված հայտ/եր/ը կազմված և ներկայացված է/են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, և բացեց համապատասխան գնահատված հայտ/եր/ը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ՝ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան՝ բացառությամբ.

**«ԱՍ ՕՅԻԼ» ՍՊԸ-ի** կողմից Հավելված N 1-ով ներկայացվող «Դիմում-հայտարարություն» փաստաթղթում բացակայում է Ընթացակարգի հրավերով պահանջվող սպասարկող բանկի ու բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը: Ինչպես նաև 1-ին չափաբաժնի մասով Ընթացակարգի հրավերի 7.1 կետով պահանջվող կանխիկ փողի ձևով ներկայացվող հայտի ապահովման վճարումը հավաստող «Բյուջետային փոխանցում N00163» անդորրագրում նշված գումարը Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին չի մուտքագրվել:

**«Վ. Վ. ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ի** կողմից Հավելված 1.1-ով ներկայացված «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթղթում բացակայում է Ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն, ազգանունը) դաշտի տեղեկատվությունը: Ինչպես նաև Հավելված 2-ով ներկայացվող «Գնային առաջարկ» փաստաթղթում 1-ին չափաբաժնի մասով հաշվարկը սխալ է իրականացվել, մասնավորապես «Արժեք» և «ԱԱՀ» դաշտերում լրացված՝ և տառերով, և թվերով նշված գումարների փաստացի ստացվող հանրագումարը չի համապատասխանում «Ընդհանուր գինը» դաշտում նշված տառերով գրված արժեքին,

**«Մաքս Օիլ» ՍՊԸ-ի** կողմից Հավելված 2-ով ներկայացվող «Գնային առաջարկ» փաստաթղթում 1-ին չափաբաժնի անվանումը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված անվանումը, մասնավորապես առաջարկվել է՝ «Դիզելային վառելիք», իսկ հրավերով պահանջվել է՝ «Դիզելային վառելիք, ամառային»:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի անվանումը | Մասնակցի անվանում | Գնման հայտով | Մասնակիցների առաջարկած գները |
|---|---|---|---|

| N | Հայերեն | | սահմանված գինը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1-ին | Դիզելային վառելիք, ամառային | «Վ. Վ. ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ | 49,000,000.00 | 37,485.00 | 7,497,000.00 | 44,982.00 |
| | | «ԱՍ ՕՅԻԼ» ՍՊԸ | | 38,383,333.33 | 7,676,666.67 | 46,060,000.00 |
| | | «Մաքս Օիլ» ՍՊԸ | | 40,016,666.67 | 8,003,333.33 | 48,020,000.00 |
| 2-րդ | Բենզին ռեգուլյար | «Վ. Վ. ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ | 7,500,000.00 | 5,862,500.00 | 1,172,500.00 | 7,035,000.00 |
| | | «ԱՍ ՕՅԻԼ» ՍՊԸ | | 5,875,000.00 | 1,175,000.00 | 7,050,000.00 |
| | | «Մաքս Օիլ» ՍՊԸ | | 6,125,000.00 | 1,225,000.00 | 7,350,000.00 |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2025թ. դեկտեմբերի 22-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. **«ԱՍ ՕՅԻԼ» ՍՊԸ-ի, «Վ. Վ. ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ի** և **«Մաքս Օիլ» ՍՊԸ** հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժել և ճանաչել որպես անբավարար՝ հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 8.2-րդ կետով սահմանված պահանջները:

3. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2025թ. դեկտեմբերի 24-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ.

Մասնակիցների կողմից, սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել են արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները, բացառությամբ **«ԱՍ ՕՅԻԼ» ՍՊԸ-ի:**

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026թ. հունվարի 05-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետը՝ Պաշտոնական աղբյուրների միջոցով չստուգել մասնակցի կողմից համապատասխանելու վերաբերյալ հայտով ներկայացված հավաստման իսկությունը՝ պատճառաբանված որոշման բացակայության հիմքով:
3. **«ԱՍ ՕՅԻԼ» ՍՊԸ**-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները:
4. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով **«ԱՍ ՕՅԻԼ» ՍՊԸ**-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել **«Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրենին**:
5. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
6. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «Վ. Վ. ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ | անբավարար |
| | «ԱՍ ՕՅԻԼ» ՍՊԸ | անբավարար |
| | «Մաքս Օիլ» ՍՊԸ | անբավարար |
| 2-րդ | «Վ. Վ. ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ | բավարար |
| | «ԱՍ ՕՅԻԼ» ՍՊԸ | անբավարար |
| | «Մաքս Օիլ» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026թ. հունվարի 05-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած ՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները:
2. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից, որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանում | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը/առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 2-րդ | «Վ. Վ. ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ | X | 5,862,500.00 |
| | «Մաքս Օիլ» ՍՊԸ | | 6,125,000.00 |

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակից/ներ/ին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Վ. Հակոբյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Հ. Պետրոսյան ______________

Կ. Մնոյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ______________